Յաճախ աչքիդ հանդիպում են սափրիչի խանութներ, ուր յաճախորդները բոլոր ուժով գլուխները յետ ճկած նստած են մի յուսահատ դիրքով, քթները յանձնած սափրիչի բարեհաճ տրամադրութեանը. կամ մի ճապոնուհի, որ զբաղուած է իր տուալետն աւարտելով:

Ապա նորից գալիս են խանութները:

Հովհարներ, ափսէներ, զամբիւղներ, բոլորն էլ, կախուած առաստաղից, ծածանւում են անցորդի քթի տակ: Նրանց ետեւից նկատւում է մի ամբողջ շարք յարդէ ոտնամանների իրանց թաւշէ գեղեցիկ օղակներովը. կամ մի չաստուած, որ իր ահագին փորովը բազմած է սեղանի գլխին:

Շատ են ժամագործները: Ժամացոյցը արեւելքում խիստ է յարգւած: Զինացիք նկարւելու ժամանակ ժամացոյցը դնում են իրանց մօտը սեղանի վրա, երբեմն նոյն իսկ երկուսը, իրանց աւելի փառահեղութիւն տալու համար:

Լուսանկարիչների ցուցանակներն էլ բաւական յաճախ են աչքի ընկնում. մանաւանդ եւրոպական թաղի մօտերը: Լուսանկարը շատ էժան է. 12 հատ գեղեցիկ գունաւոր տեսարանը արժէ 2 իէն (մօտ 2 ռուբլի): 12 փոքր նկար վիզիտ դիրքով այն էլ ամենալաւ լուսանկարչի մօտ արժէ նոյնպէս 2 ռ., իսկ աշխատանքը չափազանց մաքուր է ու սիրուն:

Ուտեստի շուկան նոյնպէս մօտիկ է եւրոպական մասին: Խանութները շարւած են իրանց տեսակի համեմատ. մի շարք միայն միս են ծախում, վերջը բանջարեղէն, պտուղ, ձուկ եւ այլն:

Միսը դրած է ապակի զանգակների տակ, որ սաստիկ մաքուր են պահում:

Ձկան խանութը ներկայացնում է վրան ծածկած մի